ԼՂԻՄ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՍՐՎԵԼ Է

Լեռնային Ղարաբաղում նորից հաճախակի են դարձել հակահիրավական և հանցավոր գործողությունների դեպքերը, որոնք կատարվում են հիմնականում ազգամիջյան հողի վրա: Որպես կանոն, «թեժ կետեր» են դառնում հայերի և ադրբեջանցիների համատեղ բնակության վայրերը:

Հադրութի շրջանի Տող գյուղը, որը մի ժամանակ հրոչակված էր իր ինտերնացիոնալիստական ավանդույթներով, ներկայումս ավելի ու ավելի հաճախ է հիշատակվում ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության ամփոփագրերում, որտեղ գրի է առնվում ինքնավար մարզի տարածքում տեղի ունեցած պատահարների մասին ամբողջ ինֆորմացիան: Այսպես, հոկտեմբերի 1-ին կեսգիշերի մոտ գյուղում փոխհրաձգություն է տեղի ունեցել: Բարեբախտաբար, տուժածներ չկան: Առանձնակի մտահոգություն են պատճառում տեղական դրպրոցի երկու ազգությունների դասատուների և աշակերտների միջև ստեղծված հարաբերությունները, քանի որ դրանք ակամա անդրադառնում են գյուղացիների վարքի վրա:

Փոխադարձ վիրավորանքներն ու վեճերը, եթե ժամանակին կանխիչ միջոցներ չձեռնարկվեն, կարող են վերածվել ընդհարումների: Ահա թե ինչու որոշված է Տող գյուղում որոշ չափով ավելացնել իրավակարգի պահպանության այստեղ գտնվող զինվորական կոնտինգենտի թվակազմը:

Նույն օրը Կրկժան բնակավայրում, որն ընկած է մարզային կենտրոնի ծայրամասում, մանրագնդակով վիրավորվել են ադրբեջանցի երկու դեռահաս եղբայրներ: Նրանց հոր ասելով, դա տեղի է ունեցել իրենց տան բակում առավոտյան մոտավորապես ժամը 8-ին: Պատահարը հետաքննվում է:

Անքուն գիշերներ են անցկացնում Հադրութի և Ծուշիի շրջանների հեռավոր հայկական գյուղերի բնակիչները: Նրանց անընդհատ սպառնում են ադրբեջանցիները: Ընդ որում նրանց նպատակը մեկն է՝ մարդկանց ստիպել հեռանալ հայրենի վայրերից:

Վերջերս Ստեփանակերտում ստացված երկու երկաթուղային գնացքները բնավ էլ վիճակը չեն փոխում, քանի որ առ այսօր ԼՂԻՄ-ի համար նախատեսված զանազան ժողովրդատնտեսական ապրանքներով բեռնված մոտ 700 վագոն կանգնած է մնացել մարզի սահմաններից դուրս երկաթգծերում:

Ինչպես տեսնում ենք, իրավիճակի հերթական սրումը զուգադիպում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ներկա նստաշրջանի աշխատանքին: Դա երևի ձեռնտու է այն ուժերին, որոնք պառլամենտական սեղանի շուրջը առարկելու բան չունեն: Սակայն որն է ելքը: Ժամանակն է վճռական միջոցներ ձեռնարկել ռեգիոնում կարգուկանոն հաստատելու համար: Ընդ որում, պետք է հիշել, որ լարվածության ուժեղացման է հանգեցնում ոչ այլ ինչ, եթե ոչ Ղարաբաղի պրոբլեմի քաղաքական լուծման չարդարացված ձգձգումը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ

Խմբագիր՝ Շ. Բ. ԴԱՎԹՅԱՆ

50, տեղակալ՝ 53—86—30, քարտուղարություն՝ 52—84—70, բաժիններ՝